

միտքը՝ որ կ'ուզե ազատիլ մեզ ապականող, կաշկանդող զգացումներէն, բարձրանալ բնագոյններէն՝ որոնց ստրուկ գերեվարներն են մարդը, համայնքները եւ ազգերը: Ու Վանահայրը կ'ըսէ Աբեղային.

*«-Դուն նայե երկիհնք, որդի՛, երկիհնքը միտքն է բնութեան, խոր ու խաղաղ»:*

Հրաշալի չէ՞ ասիկա. այո՛, երկիհնքը իր հազար բիւր լուսաւորներով, մոլորակներով՝ արեգակնային դրութեան մաթեմաթիքական ճշտութեամբ ոլորտող շարժումներով, այնքան լաւ կրնայ բարձրագոյն եւ անխարդախ ճշմարտութեան տենչացող միտքը բնորոշել:

Յետոյ վսեմ եւ վճռական ըռպէի մը մէջ՝ լսեցէք Վանահայրը կրկին, երբ իր ստորադասներուն երեսին կը նետէ՝

*«- Դո՛ւք... հոս իմ շուրջս, ե՛ս... հո՛ւ կեցած ձեր մէջը... Ե՛ս ձեր վանահայրը, դո՛ւք իմ միաբանութիւնս, իմ իսկ հիմնած: (Ժպտուն) Միաբանութիւն. ի՛նչ միութիւն ձեր ու իմ մէջ... (Աչքերը շփելով) Կարծես կապը կ'իյնայ աչքերէս: Ինչ պէս է եղեր, որ ես չեմ հասկըցեր այսքան պարզ բանը, այսքան ակընյայտնի: Մինչեւ հոս, մինչեւ անապատ կրցեր ենք մենք միասին: Մինչեւ հոս ես կրնայի բերել ձեզի, մինչեւ հոս կարելի է բերել մարդը, բայց հոսկէ անդին... հոսկէ անդին մարդ ինքը պիտի երթայ: Ճշմարիտը դո՛ւք էք. այդ եկեղեցին պէտք է, որ նա մնայ, ան է ձեր եկեղեցին. գացէք ներս ան կուտայ ձեզի անվերջ աղօթքներ ու մխիթարանք, ան կը բանայ ձեզի արքայութեան դռները, կ'ազատէ բոլոր սատանաներէն, ան ձեզի ձեր հացն ալ կուտայ ու ձեր հանգիստը. գացէք, գացէք ներս ու խաղաղութիւն թող ըլլա ձեզի հետ: Իսկ իմ փնտռածս ատիկա չէ. իմ փնտռածս աշխատանքն է, ներքին անդու ու անկաշկանդ որոնումը, ներքին անվերջ նուաճումները բարձունքէ բարձունք, պարիսպէ պարիսպ, տարակոյսներու անդունդներուն վրայէն, ելքերով եւ անկումներով. անդադար խոյանք մը դէպի վերինը, տաժանակիր աշխատանք մը դէպի ճշմարտութիւնը: Գացէք, գացէք ներս դուք ձեր եկեղեցին, ես ալ երթամ իմ եկեղեցին, բայց այս անգամ ես, միայն ես. եւ կերտուածք*